ՆԱՐԵԿ ԿԵՍՈՅԱՆ
ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի գիտաշխատող, տ.գ.թ.

ՀՀ ԲԻԶՆԵՍ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՀԱՐՄԱՐԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ԱՐԴԻ ՓՈՒԼՈՒՄ

Անցումային փուլի առաջատարների՝ Կենտրոնական Եվրոպայի և Բալթյան երկրների փորձը ցույց է տալիս, որ կայուն աճի տեմպերը պահպանելու համար կարևոր են այնպիսի գործոնները, ինչպիսիք են՝ **կառուցվածքային** և **ինստիտուցիոնալ** արմատական բարեփոխումները, որոնց նպատակն է՝ տնտեսական գործունեության մրցակցային պայմանների ստեղծումը, գույքային իրավունքների ամրապնդումը, ֆինանսական միջնորդության արժեքը նվազեցնելու նպատակով բանկային համակարգի և կապիտալի շուկաների զարգացումը, ինչպես նաև միջազգային ծառայությունների ու գործոնային շուկաների հետ ինտեգրման խորացումը: Նշված գերակայությունների իրականացման համար կենսական նշանակություն ունի տնտեսական և հասարակական ինստիտուտների որակի և հնարավորությունների շարունակական կատարելագործումը, դրանց արդիականացումը ու համապատասխանեցումը զարգացած երկրների ստանդարտներին և պահանջներին կամ այլ բառերով՝ երկրի ինստիտուցիոնալ արդիականացման գործընթացի անընդհատության ապահովումը: Այդ գործընթացի հիմքն ինչպես Հայաստանի օրենսդրության, այնպես էլ տնտեսական և հասարակական ինստիտուտների քայլ առ քայլ համապատասխանեցումն է ԵՄ պահանջներին և ստանդարտներին եվրոպական հարևանության քաղաքականության (ԵՀՔ) շրջանակներում[1]: ՀՀ տնտեսական զարգացումը ներկա փուլում մեծապես կախված է բարեփոխումների նշանակալից արագացումից և հաջող ներդրումից:

Համաշխարհային բանկի **«գործարարությամբ զբաղվելը»** վերլուծական նյութերում դասակարգված են կարգավորումները, որոնք ուղղակիորեն ազդում են գործարար միջավայրի զարգացման աստիճանի և տնտեսական աճի վրա՝ հնարավորություն տալով իրականացնել միջերկրային համեմատություններ հետազոտված 178 երկրների միջև: Այս զեկույցում *այդ երկրների շարքում Հայաստանը 2009 թ. զբաղեցրել է 43-րդ տեղը*՝ նախորդ տարվա համեմատ կրճատելով իր վարկանիշը, որտեղ այն 39-րդ տեղն էր զբաղեցնում, ինչպես ցույց է տրված գծապատկեր 1-ում:

Գծապատկեր 1

ՀՀ «բիզնեսով զբաղվելու» հարմարավետության գնահատումը այլ երկրների շարքում



Հայաստանում *«բիզնեսով զբաղվելու»* հարմարավետության գնահատման համար կիրառված ընթացակարգերը բաղկացած են երկու փուլերից.

1. Բացահայտել երկրի համեմատական տեղն անցումային տնտեսության երկրների շարքում՝ հաշվի առնելով բիզնես միջավայրի ընդհանուր «ֆորմալ» հարմարավետությունը: Իսկ լավագույն փորձի ցուցանիշները «բիզնեսով զբաղվելու» յուրաքանչյուր ուղղության հա-

[1] ԵՀՔ, որի մեջ Հայաստանը, Հարավային Կովկասի այլ հանրապետությունների հետ, ընդգրկվել է 2004թ. հունիսից: Հայաստանի համար ԵՀՔ շրջանակում գործողությունների ծրագիրը 2008-2012 թթ. համար հաստատվել է 2006թ. նոյեմբերին, իսկ ԵՄ ինտեգրմանն ուղղված ԳՀՀ իրականացման 2006-2009 թթ. Ազգային ծրագիրը՝ 2006թ. մայիսին:

մար սահմանվել են ոչ թե համաշխարհային մակարդակով, այլ անցումային տնտեսության երկրների մակարդակով:

2. Բիզնես միջավայրի բարենպաստ կամ անբարենպաստ լինելն ամբողջությամբ ներկայացնելու համար առաջնակարգ ուշադրություն է դարձվում ստվերային տնտեսության չափին: *«Բիզնեսով զբաղվելու արժեքը»* փաստաթղթի ցուցանիշների կիրառումը թույլ է տալիս գնահատել, թե որքանով է երկիրը շեղվում լավագույն փորձից յուրաքանչյուր ուղղության և յուրաքանչյուր ցուցանիշի կտրվածքով՝ կապված բիզնեսին առնչվող օրենքների և կանոնակարգերի հետ:

Այդ առումով հաշվի են առնվում հետևյալ գործոնները.

Ընկերության հիմնադրում: Հայաստանում ընկերություն հիմնադրելու համար միջինում պահանջվում է իրականացնել 6 ընթացակարգ, որը տևում է 15 օր և պահանջվում է մեկ շնչին ընկնող ՀՆԱ-ի 2.6% ծախս: Համաշխարհային մակարդակով այս ցուցանիշով Հայաստանը դասակարգվում է 21-րդ տեղում (գծապատկեր 2):

Գծապատկեր 2

Ընկերության հիմնադրման ընթացակարգերը Հայաստանում այլ երկրների շարքում



Լիցենզավորում (շինարարական թույլտվություններ): Այդ գործառույթները հանրապետությունում բաղկացած են 20 ընթացակարգերից, տևել են միջինը 137 օր, որոնց արժեքը կազմել է մեկ շնչին ընկնող ՀՆԱ-ի 104.9%-ը: Շինարարական թույլտվությունների ստացման դյուրինության առումով Հայաստանը գրավում է 72-րդ տեղը (գծապատկեր 3):

Գծապատկեր 3

Ընկերության հիմնադրման ընթացակարգերը Հայաստանում այլ երկրների շարքում



Աշխատանքային հարաբերությունների կարգավորում: Հայաստանում աշխատանքի ընդունման բարդության ցուցիչը 33 է, ժամանակի խստության ցուցիչը՝ 20, աշխատանքից ազատման բարդության ցուցիչը՝ 10 է: Աշխատանքային հարաբերությունների կանոնակարգման դյուրինության ցուցանիշով Հայաստանը զբաղեցնում է 62-րդ տեղը աշխարհում (գծապատկեր 4): Բացի այդ, 178 երկրից 75 երկիր չի կանոնակարգում գիշերային աշխատանքը և ոչ էլ պարտադրում հատուկ ոչ աշխատանքային օրեր: Այդ երկրները պայքարում են պահ-

պանել իրավունքների հավասարակշռությունն աշխատանքի շուկայի ճկունության և աշխատանքի կայունության միջև, և շատ երկրներ սխալվել են՝ կիրառելով ավելորդ կանոնակարգեր՝ այսպիսով վնաս հասցնելով թե գործարարությանը, թե աշխատողներին: Աշխատաշուկայի ճկունությունը կարևոր դեր է խաղում ոչ միայն գործազրկությունը կրճատելու, այլև՝ ներդրումները խթանելու առումով: Այսինքն՝ աշխատաշուկայի ճկունությունը, մնացած բոլոր պայմանների հավասարության դեպքում, զգալի ազդեցություն է ունենում նաև օտարերկրյա ուղղակի ներդրումների հոսքի վրա:

Հետևաբար, ՀՀ տնտեսության «երկրորդ» սերնդի բարեփոխումների ներկա փուլում գտնում ենք, որ նպատակահարմար է իրականացնել աշխատանքի շուկայի առավելագույնս ազատականացում և աշխատատեղերը տնտեսության ստվերային հատվածից ֆորմալ հատված տեղափոխելու խրախուսման քաղաքականություն:

Գծապատկեր 4

Աշխատանքային հարաբերությունների կարգավորման ընթացակարգերը Հայաստանում և այլ երկրների շարքում



Սեփականության գրանցում: Հայաստանն աշխարհում զբաղեցնում է 5-րդ տեղն այս ցուցանիշով, բաղկացած են 3 ընթացակարգերից, տևել են միջինը 4 օր, որոնց արժեքը կազմել է մեկ շնչին ընկնող ՀՆԱ-ի 0.3%-ը:

Գծապատկեր 5

Սեփականության գրանցման ընթացակարգերը Հայաստանում և այլ երկրների շարքում



Ուստի, էլեկտրոնային ընթացակարգերի և տեղեկատվության որոնման համակարգի ներդնումը թույլ կտա էլ ավելի բարձրացնել Հայաստանի դիրքը՝ դարձնելով այն աշխարհում սեփականության իրավունքի փոխանցման բնագավառում ամենաարդյունավետ ընթացակարգեր ունեցող երկիր (գծապատկեր 5):

Վարկեր ստանալը: Հայաստանի չափահաս բնակչության 34.5%-ն է ընդգրկված մասնավոր վարկային գրասենյակում/բորսայում և 4.4%-ը հանրային վարկային ռեգիստրում, մինչդեռ Մեծ Բրիտանիայում այդ թիվը կազմում է բնակչության մոտ 85%-ը: Հայաստանը վարկերի ստացման դյուրինության առումով դասակարգվում է 43-րդ տեղում (գծապատկեր 7):

Գծապատկեր 7

Վարկեր ստանալու ընթացակարգերը Հայաստանում և այլ երկրների շարքում



Վարկի ձեռքբերման բարդությունը բացատրվում է ֆինանսական շուկայի վատ գործելու հանգամանքով, որն էլ հանդիսանում է օրինականորեն գործելուց հրաժարվելու հիմնական պատճառներից մեկը: Թեպետ, գրավի ստեղծման արժեքը շատ ցածր է՝ համեմատած տարածաշրջանային և միջազգային չափանիշների հետ, սակայն այն չի խթանում հայկական բիզնեսին՝ գործելու օրինական ճանապարհով, հատկապես՝ կոռուպցիոն բարձր ռիսկերի առկայության պայմաններում: Փոխառուների վերաբերյալ վարկ ստանալու համար համակարգված տեղեկությունների բացակայությունը սահմանափակում է վարկերի տրամադրումը, ինչպես նաև նվազեցնում է վարկերի ստեղծման համար պահանջվող բավականաչափ ցածր արժեքի և սնանկացման դեպքում վարկատուների իրավունքի պաշտպանության ճիշտ ստանդարտները: Իսկ վարկերի տրամադրման ընթացակարգի պարզության դեպքում այն կարող է նպաստել օրինական դաշտ անցնելու կամ այնտեղ մնալու համար:

Ներդրողների պաշտպանություն: Այս ոլորտը բնութագրում է ընկերության ղեկավարության կողմից իրականացվող գործարքների վրա փոքր մաս կազմող ներդրողների/բաժնետերերի իրավական ազդեցություն ունենալու իրավունքների մակարդակը: Հայաստանը գնահատվում է 2 միավորով տնօրենի պատասխանատվության և 8 միավորով՝ փոքր ներդրողների/բաժնետերերի իրավական պաշտպանության ու բացահայտման պահանջների ցուցիչով: Աշխարհում ներդրողների/փոքր բաժնետերերի պաշտպանության մակարդակով Հայաստանը զբաղեցնում է 93-րդ տեղը (գծապատկեր 8):

Գծապատկեր 8

Ներդրողների պաշտպանության ընթացակարգերը Հայաստանում և այլ երկրների շարքում



Պայմանագրերի իրագործում: Միջինում Հայաստանում առևտրային/կոմերցիոն վեճը կարգավորելու համար պահանջվում է իրականացնել 48 ընթացակարգ, որը տևում է 285 օր, և ծախսը կազմում է հայցի արժեքի 19%-ը: Աշխարհում Հայաստանը զբաղեցնում է 62-րդ տեղը՝ պայմանագրերի կիրառման դյուրինության առումով (գծապատկեր 9):

Ներդրողների պաշտպանության ընթացակարգերը Հայաստանում և այլ երկրների շարքում



Այսպիսով, բիզնես միջավայրի հարմարավետության առումով, Հայաստանը տարածաշրջանի երկրների նկատմամբ ունի մի շարք համեմատական առավելություններ, որոնք լրացուցիչ ազդակ են՝ Հայաստանը գործարարության և ներդրումային միջավայրի գերազանցության կենտրոն դարձնելու համար: Ավելին՝ էկոնոմիկայի նախարարության կողմից մշակված «Հայաստանի գործարար և ներդրումային միջավայրի ***գերազանցության կենտրոն*** համազգային նախագիծ»-ում 2008-2012թթ., որի իրականացման ժամկետները հստակ ամրագրված են **«գերազանցության կենտրոն» հայեցակարգում** միջոցառումների ցանկով, ինչպես նաև ՀՀ ազգային անվտանգության ռազմավարության դրույթներով ընդգծվել է գործարար միջավայրի հրատապ բարելավման անհրաժեշտությունը, որի համար անհրաժեշտ է իրականացնել հավակնոտ բարեփոխումներ: Վերջին 3 տարիների ընթացքում այս գործընթացը կայացել է ԱՊՀ մի շարք երկրներում, և բարեփոխումների մոտ 85%-ը իրականացվել է նոր ձևավորված կառավարությունների գործունեության առաջին 15 ամիսների ընթացքում: Ընդ որում, բարեփոխումների գինը տատանվում է 1-2 մլն. ԱՄՆ դոլարի սահմաններում: Փորձը ցույց է տալիս նաև, որ թե՛ միջազգային դոնորները, և թե՛ մասնավոր հատվածը պատրաստ են կիսել ծախսերի ավելի քան 60-70%-ը[1]: Միաժամանակ՝ նույն միջազգային համադրումները ցույց են տալիս, որ վարչարարական խոչընդոտների վերացման, գործընթացների պարզեցման և թափանցիկության բարձրացման հետևանքով օգուտները զգալիորեն գերազանցում են իրականացված ծախսերը[2]:

ՀՀ բիզնես միջավայրի հարմարավետության գնահատումը թույլ է տալիս ենթադրել, որ Հայաստանը հավակնություններ ունի դառնալու տարածաշրջանի գործարար և ներդրումային միջավայրի **«գերազանցության կենտրոն»**: Իսկ դա նշանակում է, որ հանրապետությունում բիզնես ունենալը պետք է լինի շահավետ, իսկ գործունեություն ծավալելու պայմանները՝ գրավիչ, ինչը մասնավորապես կնպաստի «ագրեսիվորեն աճող» ՓՄՁ կայացմանը և հարևան ու զարգացած երկրների շուկաներ ներխուժմանը:

---

[1] www.doingbusiness.org/articles/php-?13256985/rankes

[2] ՀՀ էկոնոմիկայի նախարարություն, *«Հայաստանի գործարար և ներդրումային միջավայրի գերազանցության կենտրոն համազգային նախագիծ»*, Երևան, 2008, 18 էջ: